Ողջո՛յն քեզ, Մարիա՛մ, լի՛ շնորհօք, Տէր ընդ քեզ

Կաթողիկէ հայվատք

ԱՇՈՅՔԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷՆԵՐԻ ՀՈԳԵՒՈՐ ԹԵՐԹԸ

Դ մայիս, 2022

Ողջո՛յն քեզ, Մարիամ,
Լի շնորհօք, Տէր ընդ քեզ,
Օրհնեա՛լ ես Դու ի կանայս,
Եւ օրհնեա՛լ է պտուղ որովայնի Քո Յիսուս:
Սրբուհի՛ Մարիամ, Մայր Աստուծոյ,
Բարեխօսեա՛ վասն մեր մեղաւորացս
Այժմ եւ ի ժամու մահուան մերոյ.
Ամէն:

Աստվածամոր երևումները պորտուգալական Ֆաթիմայում. փաստագրված հրաշքը

Աստվածամոր երևումները Պորտուգալիայի Ֆաթիմա քաղաքի մոտ տեղի են ունեցել 1917թ., Ալյուստրել գյուղի երեք փոքրիկ հովիվներին՝ տասը տարեկան Լուսիա դոս Սանտոսին, ինը տարեկան Ֆրանչեսկո Մարտոյին և ութնամյա Հակինթա Մարտոյին: Երեք երեխաները վկայել են, որ նրանց երևացել է մի «տիկին» (հետագայում, նա հայտնեց, թե ինքը Աստվածամայրն է) ու փոխանցել է հոգևոր և մարգարեական հաղորդագրություններ: Կաթողիկէ Եկեղեցին ճանաչել է այս երևումների ճշմարիտ փաստը: Աստվածամոր երևումները Ֆաթիմայում եղել են 1917-ի մայիսից մինչև հոկտեմբեր՝ յուրաքանչյուր ամսվա 13-ին, ըստ Սուրբ Կույսի խոստման:

1917թ. մայիսի 13, առաջին երևում

Լուսիան, Հակինթան ու Ֆրանչեսկոն Քովա-դա-Իրիա կոչվող հովտում, իրենց Ալյուստրել գյուղից քիչ հեռու, ոչխարներին էին արածեցնում: Լուսիան իր օրագրում պատմում է.

«Մենք սարի լանջով իջնում էինք դեպի ճանապարհը և մեր առջևից քշում էինք ոչխարներին: Մենք լանջի կեսը գրեթե անցել էինք, երբ հասնելով մի մեծ կաղնու, հանկարծ մի կայծակ տեսանք, իսկ մի քանի քայլ հետո մեր առջև հայտնվեց մի «տիկին», ով ամբողջովին սպիտակ էր հագնված ու արեգակից էլ պայծառ էր շողում: Մենք ապշահար կանգ առանք: Այնքան մոտ էին կագնած, որ գտնվում էինք Նրան շրջապատող կամ Նրանից լուսարձակվող շողերի մեջ: Հեռավորությունը մոտ մեկուկես մետր էր: Այդ տիկինն ասաց. «Մի՛ վախեցեք: Ես ձեզ չեմ վնասի»:

–Որտեղի՞ց Դուք հայտնվեցիք:

–Ես երկնքից եմ եկել:

–Եվ ի՞նչ եք Դուք ուզում մեզանից:

-Ես եկել եմ ձեզանից խնդրելու, որ դուք վեց ամիս շարունակ, յուրաքանչյուր ամսվա 13-ին և միշտ նույն ժամին այստեղ լինեք: Այդ ժամանակ էլ Ես ձեզ կասեմ, թե ով եմ Ես և ինչ եմ ուզում: Դրանից հետո Ես այստեղ կվերադառնամ յոթներորդ անգամ:

–Ես նույնպե՞ս երկնքում կհայտնվեմ,-հարցրեցի ես (*Լուսիան-խմբ.*):

–Այո, Հակինթան և Ֆրանչեսկոն ևս կլինեն երկնքում, սակայն Ֆրանչեսկոն պետք է շատ աղոթի Վարդարան»:

Այնուհետև Լուսիան հարցրեց վերջերս մահացած երկու աղջիկների՝ Մարիա դաշ Նեվեշի ու Ամելիայի մասին: Սուրբ Կույսը պատասխանեց, որ առաջինն արդեն իսկ Երկնքում է, իսկ երկրորդը մինչև Ահեղ դատաստանի օրը կմնա քավարանում:

Լուսիան, Հակինթան և Ֆրանչեսկոն համաձայնեցին այդ երկնային Տիկնոջ առաջարկությանը՝ «իրենք իրենց Աստծուն նվիրելու», որպեսզի «*համբերությամբ կրեն Աստծո կողմից ուղարկվող բոլոր զրկանքներն ու տառապանքները՝ հանուն մեղավորների մեղքերի թողության և դարձի*»: Սուրբ Կույսն ասաց, որ «այդ ժամանակ դուք շատ կտառապեք, սակայն Աստծո ողորմածությունը ձեզ ուժ կտա»:

Վերջում Սուրբ Կույսն ասաց. «*Ամեն օր Վարդարան աղոթե՛ք, որպեսզի աշխարհում խաղաղություն հաստատվի ու վերջ դրվի պատերազմին*»:

Լուսիան վկայում է, որ հետո «Նա սկսեց դանդաղ բարձրանալ դեպի արևելք՝ մինչև տարածության անսահմանության մեջ անհետանալը»:

1917թ. հունիսի 13, երկրորդ երևումը

Նշանակված օրը՝ հունիսի 13-ին, նրանք եկան Քովա-դա-Իրիա, որտեղ արդեն իսկ հավաքվել էր շուրջ վաթսուն մարդ: Կաղնու մոտ երեխաները ծնկի իջան ու սկսեցին աղոթել Վարդարան:

Լուսիան ասաց. «Դուք ինձ հրամայեցիք այսօր գալ: Ի՞նչ եք ուզում, որ ես անեմ»:

Բոլորը տեսան, թե ինչպես Լուսիան ձեռքը պարզեց դեպի արևելք ու բացականչեց. «Ահա՛ Նա»:

Տիկնոջ կողմից այդ երևման ժամանակ Լուսիային կարդալ ու գրել սովորելու հանձնարարություն տրվեց, որից հետո Լուսիան խնդրեց իրենց Երկինք տանել:

– Այո, Հակինթային և Ֆրանչեսկոյին Ես շուտով կտանեմ, սակայն դու դեռ որոշ ժամանակ կմնաս այստեղ: Հիսուս ցանկանում է, որ քո օգնությամբ մարդիկ ճանաչեն ու սիրեն Ինձ: Նրան հաճելի է աշխարհում հաստատել Իմ Անաղարտ Սրտի պաշտամունքը:
– Ես մենա՞կ կմնամ այստեղ:
– Ոչ, զավակ Իմ: Դու տառապու՞մ ես: Քաջալերվի՛ր: Ես երբեք քեզ չեմ լքի, Իմ Անարատ Սիրտը քեզ համար կլինի ապաստարան ու ճանապարհ՝ դեպի Աստված:
Սուրբ Աստվածածնի Անարատ Սրտի վերաբերյալ Լուսիան վկայում է. «Սուրբ Կույսի աջ ձեռքում փշերով շրջապատված Սիրտ կար: Փշերը, կարծես, Նրա սրտի մեջ մխրճված լինեին: Մենք հասկացանք, որ դա մարդկային մեղքերով վիրավորված ու քավություն ցանկացող Սուրբ Կույսի Անարատ Սիրտն է»:
Ինչ վերաբերում է Հակինթայի և Ֆրանչեսկոյի ճակատագրերին, նրանք շուտով մահացան՝ 1918թ., «իսպանական» գրիպի համաճարակի պատճառով: Նրանք իրեն կարճատև կյանքը սակայն ապրեցին սրբակյաց կյանքով, շատ զոհողություններ կրեցին մեղավորների դարձի համար: Հակինթան և Ֆրանչեսկոն սրբերի շարքը դասվեցին 2017թ. մայիսի 13-ին:

1917թ. հուլիսի 13, երրորդ երևումը

Այդ օրը Քովա-դա-Իրիայում ավելի շատ մարդ էր հավաքվել: Երեխաները նրանց հետ միասին Վարդարան աղոթեցին, և շուտով Սուրբ Կույսը հայտնվեց:
Նա ասաց.
-Զոհաբերե՛ք ինքներդ ձեզ՝ հանուն մեղավորների և հաճախ կրկնեք, հատկապես, երբ զոհողություն եք անում. «Օ՜, Հիսուս, ես դա անում եմ հանուն Քո հանդեպ ունեցած սիրո, որպեսզի մեղավորները դարձի գան ու քավվեն նրանց մեղքերը, որոնք գործել են ընդդեմ Սուրբ Կույսի Անարատ Սրտի:
Այնուհետև երեխաներին ցույց տրվեց դժոխքի տեսարանը: Ըստ Լուսիայի վկայության, երեխաները «կրակի ծով տեսան: Այս հրե ծովի մեջ ընկղմված դևերն ու մարդկային ուրվագծեր ունեցող հոգիները եռում էին կրակի մեջ: Ամենուր կախված ծխի ամպերը՝ միախառնվելով ճիչերին, տնքոցներին ու հառաչանքներին, սարսափեցնում ու ստիպում էին վախից դողալ: Դևերը միմյանցից տարբերվում էին ահարկու ու անհայտ կենդանիների սահմռկեցուցիչ ու զզվելի ուրվագծերով, որոնք թափանցիկ էին, ինչպես այրված սև ածխի կտորները»: Դժոխքի այս տեսարանը մի քանի վայրկյան տևեց: Լուսիան խոստովանում է, որ եթե չլիներ նրանց Երկինք տանելու Սուրբ Կույսի խոստումը, ապա երեխաները հենց այդ պահին սարսափից կմեռնեին:
Այնուհետև Տիկինն ասաց.
– Դուք տեսաք դժոխքը, որտեղ մեռած մեղսավորների հոգիները մշտնջենական տանջանքի են ենթարկվում: Նրանց փրկելու համար Աստված երկրի վրա կհիմնի Իմ Անարատ Սրտի պաշտամունքը: Եթե կատարվի այն, ինչ ասացի, ապա շատ հոգիներ կփրկվեն ու հանգստություն կգտնեն: Պատերազմը կավարտվի, սակայն եթե չդադարեն Աստծո հանդեպ անպատվությունները, ապա Պիոս XI պապի գահակալության ժամանակ կսկսվի մեկ ուրիշ՝ ավելի սարսափելի պատերազմ: Երբ տեսնեք աննախադեպ լույսով լուսավորված մի գիշեր, ապա իմացե՛ք, որ դա նշան է այն բանի, որ Աստված պատրաստվում է պատժել աշխարհին՝ հանցագործությունների համար, և որպես պատիժ կլինի պատերազմ, սով և հալածանք՝ Եկեղեցու և Սրբազան Քահանայապետի դեմ:
Այնուհետև Սուրբ Կույսը երեխաներին սովորեցրեց հետևյալ աղոթքը (որը հետագայում հայտնի դարձավ որպես «Ֆաթիմայի աղոթք», որն ասում ենք Վարդարանի յուրաքանչյուր տասնյակից հետո). «*Ո՜վ, Հիսո՛ւս, ներիր մեր մեղքերը, փրկի՜ր մեզ դժոխքի կրակից, ու երկինք տար բոլոր հոգիները, հատկապես նրանց, որոնք ամենաշատը Քո ողորմության կարիքն ունեն: Ամեն*»:

1917թ. օգոստոսի 13, 19 չորրորդ երևումը

Այդ ժամանակ Պորտուգալիայում իշխանությունը պատկանում էր ձախ-լիբերալներին, որի անդամների մեծամասնությունը մասոններ էին և, հետևաբար, հակակաթողիկէ: Այդ էր պատճառը, որ Ֆաթիմայում Սուրբ Աստվածածնի երևումների մասին լուրերը բացասաբար ընկալվեցին: Օգոստոսի 13-ին երեխաները չեկան Քովա-դա-Իրիա, քանի որ տեղական իշխանությունների կողմից ձերբակալվել ու տարվել էին Վիլա-Նովա դե Օուրեմ: Այնտեղ սպառնալիքներով փորձում էին երեխաներին ստիպել հրաժարվելու իրենց պնդումներից, սակայն դա նրանց չհաջողվեց: Ոչնչի չհասնելով՝ նրանց բաց թողեցին: Այդ նույն ժամանակ Քովա-դա-Իրիայի պարզ երկնքում կայծակ

հայտնվեց ու կաղնու վերևում մի շողշողացող ամպիկ երևաց: Մի քանի րոպե հետո ամպիկն անհետացավ, իսկ ամպերը դարձան բոսորագույն, կարմրավուն, վարդագույն, դեղնավուն, կապտավուն…

1917թ. օգոստոսի 19-ին երեխաներին թողեցին ոչխարներին արածացնել Ալյուստրելի մոտակայքում, երբ նրանք սառնություն զգացին, տեսան, որ արևը դարձավ դեղնավուն և ամեն ինչ լուսավորվեց ծիածանի գույներով: Սուրբ Կույսը երևաց մանուկներին և նրանց խոստացավ Իր վերջին երևման ժամանակ՝ հոկտեմբերին, հրաշք գործել ու խնդրեց այս տեղում մատուռ կառուցել:

Նա ասաց նաև.

– Աղոթեցե՛ք, ամեն ժամ աղոթեցե՛ք ու մեղավորների համար զոհաբերություններ մատուցե՛ք, քանզի շատ հոգիներ են դժոխք ընկնում, որովհետև նրանց համար ոչ ոք չի աղոթում ու զոհողություններ չի անում:

1917թ. սեպտեմբերի 13, հինգերորդ երևումը

Սեպտեմբերի 13-ին շուրջ 30.000 մարդ եկավ Քովա դա Իրիայի երևման վայրը և աղոթում էին Վարդարանի աղոթքը: Կեսօրին արևը խամրեց և արևելքից շողշողացող մի գունդ սկսեց իջնել, սպիտակ «ծաղկաթերթիկներ» ներքև թափվեցին: Սուրբ Կույսը երևաց երեխաներին և խնդրեց դարձյալ ամեն օր Վարդարան աղոթել, որպեսզի պատերազմն ավարտվի վերջապես: Լուսիան փոխանցեց հիվանդներին բուժելու խնդրանքները, սակայն Սուրբ Կույսն ասաց, որ կբուժի միայն նրանցից մի քանիսին, բայց ոչ բոլորին: Խոստացավ հրաշքը գործել հոկտեմբերին:

1917թ. հոկտեմբերի 13, վեցերորդ երևումը

Հոկտեմբերի 12-ի գիշերը Ֆաթիմայում հավաքվեցին տարբեր դասակարգի ու խավի մարդիկ (գյուղացիներ, աշխատավորներ, հոգևորականներ, ներկայացուցիչներ մամուլից ու կառավարությունից), ովքեր տարբեր վերաբերմունք էին դրսևորում կատարվածի նկատմամբ (կային հավատացյալներ, և անհավատներ, և այնպիսիք, ովքեր ովքեր հետագայում դարձան քրիստոնյաներ՝ այդ երևումներին հավատալով):

Հոկտեմբերի 13-ին ցուրտ էր և հորդառատ անձրև էր գալիս: Անձրևը դադարեց և ամպերը ցրվեցին: Օրը պայծառացավ, և հայտնվեց «տիկինը»:

Լուսիան հարցրեց.

-Ի՞նչ եք Դուք ինձանից ուզում:

-Ես քեզ ուզում եմ ասել, որ այստեղ պետք մի մատուռ կառուցվի Իմ պատվին: Ես Վարդարանի Թագուհին եմ: Պետք է ամեն օր Վարդարանի աղոթք ասել: Պատերազմն ավարտին է մոտենում և շուտով զինվորները տուն կվերադառնան:

-Ես շատ բան կուզենայի Ձեզանից խնդրել: Արդյոք Դուք կբուժե՞ք մի քանի հիվանդների ու դարձի կբերե՞ ք մի քանի մեղավորների:

-Ոմանց՝ այո, իսկ մի քանիսին ոչ: Նրանք պետք է ուղղվեն ու ներողություն խնդրեն իրենց մեղքերի համար:

Եվ Նա տխրությամբ ավելացրեց.

-Նրանք չպետք է այլևս վիրավորեն Աստծուն, Ով արդեն իսկ շատ է վիրավորված նրանցից:

Եպիսկոպոս Լեիրիային ուղղված հաշվետվության մեջ հետագայում Լուսիան վկայում է. «Սուրբ Կույսը բացեց ձեռքերն ու ստիպեց արևին փայլել: Երբ Նա բարձրանում էր, Իր սեփական լույսը նորից միախառնվեց արևի շողերի հետ: Այդ պատճառով ես բացականչեցի, որ բոլորը պետք է նայեն արևին: Ես ժողովրդի ուշադրությունը գրավելու մտադրություն չեմ ունեցել, քանի որ անգամ չէմ գիտակցել, որ իմ շուրջը մարդիկ կան հավաքված: Ես դա ներքին ոգշնչմամբ եմ արել»:

Գրեթե 70.000 մարդ տեսավ, թե ինչպես Արեգակը դարձավ սպիտակադեղնավուն, վերածվեց արծաթե սկավառակի, որին հանգիստ կարելի էր նայել: «Այս տարօրինակ սկավառակը արագորեն պտտվում էր իր առանցքի շուրջը՝ բոլոր ուղղություններով արձակելով գունավոր լույսի ճառագայթներ: Կարմիր ճառագայթները դուրս ներխուժեցին ու գունավորեցին ամպերը, երկիրը, ծառերը: Նա երեք անգամ կանգնեց ու երեք անգամ էլ վերսկսեց իր պտույտը: Մարդիկ վախեցած ծնկի իջան, հենց որ այն զիգզագաձև սլացավ ներքև՝ դեպի սարսափած մարդիկ: Այնուհետև սկավառակն իր տեղը վերադարձավ ու նորից սկսեց անտանելի շողշողալ: Այս ամենը շարունակվեց գրեթե 10 րոպե»:

«Արեգակի պարի» մասին (ինչպես սկսեցին անվանել 1917թ. հոկտեմբերի 13-ի իրադարձությունները) գրեցին անգամ հակակղերական պորտուգալական թերթերը (օրինակ՝ «O Seculo» թերթը):

Լուսիան պնդում է, որ Սուրբ Կույսի անհետանալուց հետո տեսել է Սուրբ Հովսեփին՝ Մանուկ Հիսուսի ու Սուրբ Աստվածածնի հետ միասին: Այնուհետև Սուրբ Կույսին նա տեսել է Սգացող Աստվածամոր կերպարով:

Լուսիան դարձավ միանձնուհի ու մահացավ 2005թ. փետրվարի 13-ին: Նա տվեց բազմաթիվ վկայություններ և թողեց գրի առնված հիշողություններ, որոնք երկար ժամանակ վերլուծվել են քննակվել են՝ մանավանդ երրորդ երևման ժամանակ հայտնված գաղտնիքները, որոնք երեքն են: Երրորդ գաղտնիքը փակի տակ պահվեց մինչև 2000թ. և հրապարակվեց կարդինալ Տարսիսիո Բերտոնեի կողմից, բայց կան կարծիքներ, որ այն մինչ օրս ամբողջությամբ չի հրապարակվել:

Թարգմանեց՝ Նաիրա Բաղդասարյանը

Ֆաթիմայի գաղտնիքը և «այս աշխարհի իշխանի» պարտությունը

Ֆաթիմայում Աստվածամոր երևումների 105-ամյա հոբելյանը առիթ է՝ նոր լույսի տակ և նոր պատմական պայմաններում վերլուծելու մանուկների միջոցով աշխարհին փոխանցված ուղերձների իմաստն ու արժեքը՝ ամբողջ աշխարհի և հայերիս համար: Ուզում եմ մեկ առ մեկ ձեր ուշադրությունը հրավիրել երևումների մասնակից մանուկների ընտրության, պատգամների ու «գաղտնիքի» երեք մասերի, երևումների պատմական համատեքստի ու նշանակության և, վերջապես, մեր օրերում խաղաղության կառուցման շատ կոնկրետ լուծման վրա՝ Ֆաթիման ունենալով որպես մի բանալի:

Ինչու՞ պորտուգալական գյուղի հովիվ մանուկները

Կարող է տարօրինակ թվալ, որ Աստված ամբողջ աշխարհին և իր Սուրբ Եկեղեցուն ուղղված իր պատգամները փոխանցում է մի մոռացված գյուղում ապրող, անկիրթ, դեռևս կյանքի փորձառություն չունեցող, ոչխարներ արածացնող 8, 9, 10 տարեկան փոքրիկների միջոցով: Պատգամների լրջության մասին կխոսենք ստորև, բայց մտածենք, թե ինչու է Աստծո գործողությունների տրամաբանությունը այդքան էականորեն տարբերվում մարդկային ակնկալիքներից: Ինչու՞ նման լուրջ պատգամներ՝ այդքան աննշան մարդուկների միջոցով:

Սուրբ Գիրքն ու Սրբազան Ավանդությունը մեզ սովորեցնում է, որ Աստված միշտ իր գործն աշխարհում կատարում է ամենաաննշան, արհամարհված, ոչ մի հասարարական դիրք ու իշխանություն, փող չունեցող, մերօրյա տերմինով՝ լուսանցքում հայտնված մարդկանց միջոցով. Մովսեսը, որ լեզվի արատ ուներ, Եսային, որ ասում էր Տիրոջը, թե մի մանուկ է, Հովսեփը, Մարիամը, ձկնորս առաքյալները, որ պարզ, անուս մարդիկ էին, և, վերջապես, Հիսուս Նազովրեցին՝ մեր Տերն ի՛նքը, որ երեսուն տարի հայտնի էր միայն որպես նազարեթցի մի հյուսն: Այս շարքը կարելի է երկար թվարկել՝ գրկելով սրբերի մի ամբողջ բույլ: Գուցե, պորտուգալական այս գյուղում Աստված գտավ մի անմեղ, ջերմեռանդ հավատք: Սա առիթ է, որ մենք ցնծա՛նք մի հույսով, որ մեր մոռացված հայկական գյուղերում էլ գուցե եղել են և կլինեն նման երևումներ, որոնցով մեր ազգը և աշխարհն հանուր կարևոր պատգամներ կստանան: Մի բան հստակ է, որ այդ մանուկներն աղոթում էին միշտ, և երևումներից հետո էլ հավատարիմ մնացին Տիրամոր մշտական պատգամին՝ ամեն օր աղոթել Վարդարանը, որպեսզի աշխարհում խաղաղություն հաստատվի, կատարել զոհողություններ՝ բոլոր մեղավորների դարձի համար:

Պատմական հանգամանքները և մարգարեությունները

Պատահական չէ, որ Աստվածամայրը Ֆաթիմայում երևաց 1917-ին:
Սա մի սոսկալի ճգնաժամային տարեթիվ է. ընթանում էր Առաջին համաշխարհային պատերազմը, որը սկսվել էր 1914-ի ամռանը և ավարտվեց միայն 1918-ի նոյեմբերին: Աշխարհը հյուծված էր երկու մայրցամաքներում 4 տարուց ավելի մոլեգնող ահավոր պատերազմից, որը խլեց մոտ 16 մլն մարդու կյանք՝ մոբիլիզացնելով ավելի քան 70 մլն զինվորական անձնակազմ, վատնեց ազգերի կենսական, տնտեսական, մտավոր, հոգևոր ռեսուրսները, առիթ դարձավ 1,5 մլն հայերի ցեղասպանության և բալկանյան այլ ժողովուրդների բնաջնջման, դարձավ մեկնակետ՝ Եվրասիական աշխարհամասում և կենտրոնական Ամերիկայում մեծագույն չարիքներից մեկի՝ բոլշևիկյան կամ լենինյան հեղափոխության և

համայնավարական աստվածատեաց ռեժիմի հաստատման համար, որը քրիստոնեական հավատքի դեմ ծավալված մեծագույն հալածանքներից մեկն է:

Բայց նախ կանգ առնենք 1917-ի վրա: Հենց առաջին երևման ժամանակ՝ 1917-ի մայիսի 13-ին, Աստվածամայրը փոքրիկ հովիվներին ասաց.

«Ամեն օր աղոթեցե՛ք Վարդարանը, որպեսզի ձեռք բերեք խաղաղությունն աշխարհի և ավարտը պատերազմի» (*այս և պատգամների հաջորդ խոսքերը բառացի՝ արևելահայերեն թարգմանությամբ, վերցրել եմ Հ. Մեսրոպ Հայունու հայացրած, Անտոնիո Պորելլի Մախատոյի «Ֆաթիմա՝ պատգամ ողբերգությա՞ն, թե հույսի» գրքից, Այնճար, 2015*):

Կատարված մի մարգարեությո՞ն է արդյոք, թե՞ Վարդարանի հրաշագործ զորության, Աստվածամոր միջամտության գեղեցիկ մի օրինակ, թե պարզապես կռվազան կողմերի ուժասպառում, որ 1917-ի մայիս-հոկտեմբեր ամիսների երևումներից ուղիղ մեկ տարի հետո աշխարհը շունչ քաշեց Առաջին Համաշխարհային պատերազմի ավարտով, որը սակայն ճանապարհ բացեց աշխարհաքաղաքական նոր վտանգավոր վերադասավորումների համար, որոնք 21 տարի անց սանձազերծեցին 2-րդ՝ է՛լ ավելի սարսափելի համաշխարհային պատերազմը:

Բայց Առաջին աշխարհամարտը դեռևս չարիքների սկիզբն էր, որ բաժին ընկան 20-րդ դարին՝ պատերազմներով ամենաահասարսուռ դարը պատմության մեջ: Գուցե, այս վերջին փաստն էր պատճառը, որ Աստվածամայրը երևաց հենց 20-րդ դարասկզբին: 1917-ի հուլիսի 13-ի երրորդ երևման ժամանակ Աստվածամայրը երեք մանուկներին փոխանցեց այսպես կոչված «գաղտնիքի երեք մասերը», որոնք Լուսիան բացահայտեց աշխարհին միայն 1944-ին, երկար հարցաքննություններից, վիճակավոր եպիսկոպոսների պահանջներից, և, ի վերջո, 1944-ի հունվարի 2-ին Աստվածամոր մեկ այլ երևումից հետո: Գաղտնիքի առաջին երկու մասերը հայտնի եղան մինչև 1944-ը, իսկ երրորդը երկար ճանապարհ անցավ, պահվեց փակի տակ Վատիկանում և աշխարհին հայտնվեց միայն 2000թ.՝ կարդինալ Տարսիսիո Բերտոնեի շուրթերով: Շատերը կասկածում են, որ երրորդը բացահայտված չէ մինչև վերջ: Բայց՝ հերթականությամբ:

1917-ի հուլիսյան երևման ժամանակ, ինչպես վկայում են Լուսիայի օրագրի գրառումները և մանրազնին հարցաքննությունների տեքստերը, Աստվածամայրը երեխաներին նախ ցույց տվեց գաղտնիքի առաջին մասը՝ դժոխքը, որի մեջ հայտնվել էին մեղավոր մարդկանց հոգիները, որոնց համար Աստվածամայրը խնդրում էր մանուկներին աղոթել: Տեսարանը սարսափելի է ըստ Լուսիայի նկարագրության.

«Բոռոցն ու հառաչանքը՝ լի ցավով և հուսահատությամբ, առաջացնում էին վախ և դողացնում սարսափից…» (Անտոնիո Պորելլի Մախատո, «Ֆաթիմա՝ պատգամ ողբերգությա՞ն, թե հույսի», Այնճար, 2015, էջ 58): Աստվածամայրը մեղմ քնքշությամբ հանգստացնում է վախեցած փոքրիկներին և ասում.

«*Եթե դուք անեք ասածներս, շատ հոգիներ պիտի փրկվեն, և խաղաղությունը պիտի տիրի: Թեպետ պատերազմը կավարտվի, բայց եթե շարունակեն վիրավորել Աստծուն, Պիոս 11-րդ Քահանայապետի օրոք առավել վատ պատերազմ պիտի ծագի*» (նույն տեղում, էջ 59):

2-րդ համաշխարհայինը պայթեց Պիոս 12-րդի օրոք՝ 1939-ին, բայց Պիոս 11-րդի օրոք արդեն կային բոլոր նախապայմանները, ինչպես բացատրում է Լուսիան: Աստվածամայրը հայտնեց նաև պատերազմի սկսվելու նշանը՝ «անծանոթ լույսով լուսավորված մի գիշեր», որը Լուսիան տեսավ 1938-ի հունվարին, Եվրոպայի երկնքում և որը աստղագետները բացատրեցին որպես հյուսիսափայլ:

Սուրբ Կույսը բացատրեց պատերազմի պատճառը և երեխաների միջոցով մի կարևոր առաքելություն հանձնարարեց Սրբազան Քահանայապետին, որ նաև մի կատարված մարգարեություն եղավ.

«…Աստված աշխարհը ոճիրների համար պիտի պատժի պատերազմով, սովով և Եկեղեցու և Պապի դեմ հալածանքներով: Սա խափանելու համար խնդրում եմ, որ Ռուսաստանը նվիրվի իմ Անարատ Սրտին և առաջին շաբաթներին կատարվի Ամենասուրբ Հաղորդության երկրպագությունը: Եթե իմ խնդրանքներս կատարվեն, Ռուսաստանը դարձի կգա և խաղաղություն կլինի: Այլապես իր մոլորությունները պիտի տարածի ամբողջ աշխարհի վրա. պիտի լինեն պատերազմներ և հալածանքներ՝ Եկեղեցու դեմ, բարիները պիտի տանջվեն ու սպանվեն, Սրբազան Հայրը շատ պիտի տառապի, բազմաթիվ ազգեր պիտի ջնջվեն: Սակայն, ի վերջո, իմ Անարատ Սիրտը կհաղթանակի: Սրբազան Հայրն ինձ կնվիրի Ռուսաստանը, որը դարձի կգա և աշխարհին կտրվի մի որոշ ժամանակ՝ ապրելու խաղաղության մեջ…» (նույն տեղում, էջ 60):

Պիոս 12-րդ Սրբազան Քահանայապետը 1952թ. հուլիսի 7-ին Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին վստահեց Մարիամի Անարատ Սրտին: Նրա առաքելական նամակում գրված էր. «Դժոխքի դռները երբեք չպետք է հաղթահարեն այնտեղ, որտեղ Մարիամը պաշտպանում է... Սխալն ու աթեիզմը կհաղթահարվեն նրա օգնությամբ...»: Սբ. Հովհաննես Պողոս Քահանայապետն էլ 1984թ. ամբողջ աշխարհը նվիրեց Մարիամի Անարատ Սրտին՝ առանց բացահայտորեն նշելու Ռուսաստանը: Քույր Լուսիայի հետ հարցազրույցներից հստակ չէ, Ռուսաստանը նվիրելու մասին Աստվածամոր պահանջը կատարվել է՞, թե դեռ ոչ, բայց հստակ է՝ որ համայնավարական ռեժիմի մոլորությունները՝ մարքսիզմն ու լենինիզմը տարածվեցին թե՛ միության տասնհինգ հանրապետություններում, թե՛ Արևելյան Եվրոպայի երկրներում, Չինաստանում, Կուբայում, որտեղ այդ գաղափարախոսությունը և ռեժիմը մինչ օրս կենսունակ են, իսկ նախկին խորհրդային միության երկրներում դեռ տասնամյակներ են պետք՝ համայնավարների հոգևոր անապատացման հետևանքները վերացնելու և համայնքների հոգևոր կայուն զարգացումն ապահովելու համար:

Բայց արդյո՞ք Ռուսաստանը դարձի եկել է: Ապաշխարությունն ընդհանրապես միայն Ռուսաստանի պարտականությունը չէ, իհարկե, և ապաշխարության պակասն է արմատը այսօրվա չարիքների, ըստ Ֆաթիմայի երևումների պատգամների, որոնք լիովին արտահայտում են Ավետարանի տրամաբանությունը և ուղերձը:

Ամենամեծ քննարկումների և հակասական մեկնությունների տեղիք տվել է գաղտնիքի *երրորդ մասը*:

Այս երրորդ մասի հրապարակումը, ինչպես ասացի, ձգձվեց մինչև 2000թ., մինչ այդ Լուսիայի ձեռագիր բացատրությունը պահվեց փակի տակ՝ Վատիկանում, և միայն Քահանայապետերն ու սակավ անձինք էին ծանոթացել դրա բովանդակությանը: Ինչու՞: Լուսիան, Աստվածամոր հետ իր անձնական երկխոսության հիման վրա ասում էր, որ Աստվածամայրն այն չի արտոնում հրապարակել մինչև 1960-ը, ապա Սուրբ Աթոռը հայտարարեց, թե, հավանական է, երբեք չհրապարակվի: Գաղտնիքի երրորդ մասի պարունակության հանդեպ զանգվածային հետաքրքրությունն այնքան էր սրվել, որ 1981-ի մայիսի 2-ին նույնիսկ մի արտասովոր դեպք եղավ. նախկին վանական Laurence James Downey-ն առևանգեց Դուբլինից Լոնդոն թռչող 112 ուղևորներով մի ինքնաթիռ և պահանջեց Սրբազան Քահայապետից բացահայտել Ֆաթիմայի գաղտնիքի երրորդ մասը: Բարեբախտաբար, ֆրանսիական հատուկ ուժերն ազատեցին գերյալներին և ձերբակալեցին առևանգողին: Մի քանի օր անց տեղի ունեցավ մի հրեշավոր արարք. մայիսի 13-ին՝ ճիշտ Ֆաթիմայի երևումների առաջին օրը, Հռոմի Սուրբ Պետրոսի հրապարակում Սբ. Հովհաննես Պողոս 2-րդ Քահայայապետի վրա կրակեցին: Այս մահափորձից հետո, Տիրոջ հրաշքով կենդանի մնացած Քահանայապետը ծանոթացավ չհրապարակված գաղտնիքի երրորդ մասին, քանի որ դրանում այդ մասին ակնարկ կա: Բայց միայն 2000թ. Քահանայապետն ի վերջո, որոշեց հրապարակել այն: Երկար սպասված հրապարակման տեքստը պարունակում է երեք տեսարաններ, ըստ Լուսիայի պատմածի.

1.«*Տիրամոր ձախ կողմում տեսանք մի հրեշտակ, որ բռնել էր մի հրե սուր՝ ձախ ձեռքում: Արձակում էր կայծ, որից բոցեր էին ելնում, որոնք վառելու էին աշխարհը, բայց բոցերը մարեցին, երբ շոշափեցին այն փայլը, որ ծորում էր Տիրամոր աջ ձեռքից: Տեսանք հրեշտակին, որ... ցույց էր տալիս աշխարհը և բարձր ձայնով կանչում էր.«Ապաշխարությու՛ն, ապաշխարությու՛ն, ապաշխարությու՛ն»*:

2.«*Եվ տեսանք մի հսկա լույսի մեջ, որ Աստված է, մի բան, որ տեսնում ենք ինչպես հայելու մեջ, երբ հայելու առջևից ենք անցնում, սպիտակ զգեստավորված մի եպիսկոպոս, և այն նախազգացումն ունեցանք, թե Սրբազան Քահանայապետն էր: Տեսանք տարբեր այլ եպիսկոպոսներ, քահանաներ, կրոնավորներ և կույսեր, որոնք ելնում էին մի սեպ լեռ, որի գագաթին գտնվում էր մի մեծ խաչ՝ անտաշ կոճղերով, կարծես, սնկենու կեղևից: Այդտեղ հասնելուց առաջ Սրբազան Հայրը քայլում էր կիսակործան մի մեծ քաղաքի մեջ, դողդոջուն, տատանվող քայլերով, ցավից հոգեպես ճնշված, աղոթում էր դիակների հոգիների վրա, որոնց հանդիպում էր իր ճանապարհին: Լեռանը հասնելով՝ ծնրադրեց մեծ խաչի առջև: Ահա՛ նա սպանվեց զինվորների մի խմբի ձեռքով, որոնք նրան խփեցին հրացաններով ու նետերով: Մեռան նաև եպիսկոպոսները, քահանաները, կրոնավորները, կույսերը և շատ աշխարհականներ, տղամարդիկ և կանայք...*»:

3.«*Խաչի երկու թևերի տակ կային երկու հրեշտակներ, յուրաքանչյուրի ձեռքում՝ մեկական ցնցուղ, որոնց մեջ էին հավաքում մարտիրոսների արյունը և դրանով ոռոգում հոգիներին, որոնք մոտենում էին Աստծուն*» (նույն տեղում, էջ 63):

Ըստ մեկնությունների, առաջին տեսարանով Աստվածամայրը աշխարհին զգուշացնում է Աստծո բարկության և հնարավոր պատժի մասին՝ մարդկության մեղքերի պատճառով: Բայց Աստվածամայրը միջամտում է և մեղմում Աստծո զայրույթը, «բոցերը մարեցին, երբ շոշափեցին այն փայլը, որ ծորում էր Տիրամոր աջ ձեռքից»: Բայց պետք է, որ բոլորս անսանք հրեշտակի կոչին և ապաշխարենք:

Երկրորդ տեսարանի ահավոր աղետը խոսում է այն մասին, որ մարդիկ չեն ապաշխարում, որի հետևանքը աշխարհի կործանումն է, Եկեղեցու դեմ մեծ հալածանքը և նույնիսկ Սրբազան Քահանայապետի և եկեղեցականների, միանձնուհիների, աշխարհականների մարտիրոսությունը: Կարդինալ Razinger-ի (հետագայում՝ Բենեդիկտոս 16-րդ Քահանայապետը) մեկնությամբ, սա ոչ թե աշխարհի վերջի մասին է, այլ 20-րդ դարի խտացված պատկերն է: Իրոք 1981թ. մայիսի 13-ին մահափորձ կատարվեց Քահայայապետի դեմ, Եկեղեցին բազում հալածանքներ կրեց և կրում է իր զավակների մեղքերի պատճառով: Լեռը մագլցող Սուրբ Հոր կերպարի մեջ Razinger-ը և ուրիշ մեկնաբաններ տեղավորում են մի քանի պապերի կերպարներ, ոչ միայն անցյալ կամ ներկայիս, այլև՝ ապագայի, ովքեր ընթանում են խաչի ճանապարհով՝ տեսնելով իրենց հոտի տառապանքները:

Երրորդ տեսարանը հույսի տեսարան է, հույս, որի սերմը մարտիրոսների արյունն է, որը միախառնվում է Հիսուսի արյանը և սերմ դառնում քրիստոնեության գոյության, ինչպես գրում էր Տերտուլիանոսը: Հոգիների վերադարձով դեպի Աստված՝ սկիզբ է դրվում մաքրված ու վերանորոգված մի կյանքի՝ այս աշխարհում: Սա մեր կյանքի նպատակն է, երբ սատանան պարտության կմատնվի, և Մարիամի Անարատ Սիրտը կհաղթանակի, և մարդիկ կմոտենան Աստծուն:

Որոշ մեկնաբաններ, օրինակ, Հայր Paul Kramer-ը, իր «The Mystery of Iniquity» գրքում, վստահ են, որ գաղտնիքի երրորդ մասն, իրականում, լիովին բացահայտված չէ, որ Կարդինալ Bertone-ն 2000թ. չընթերցեց գաղտնիքի երրորդ մասի ամբողջ տեքստը, միգուցե, աշխարհին գայթակղության առիթ չտալու և մարդկանց երևակայության սխալ ուղղության համար նյութ չտալու նկատառումներով: Kramer-ն իր ուշագրավ գրքում փաստեր է ներկայացնում աշխարհը կառավարող գաղտնի կազմակերպությունների և չարի իշխանության, ինչպես նաև Եկեղեցու ծոցում չարի սողոսկման (գաղափարախոսական նորարարություններով), շատ կղերականների՝ չարի թակարդն ընկնելու, մասոնական դավադրության մասին, և գաղտնիքի ենթադրյալ չբացահայտված մասը կապում է այս փաստերի հետ: Այնուամենայնիվ, սա միայն ենթադրություն է, թեև՝ լավ հիմնավորված և ուսումնասիրված:

Ֆաթիմայի երևումներից մենք պետք է գիտակցենք, որ

1.«այս աշխարհի իշխանը» ամեն կերպ՝ զանգվածային լրատվությամբ, հասարակական, քաղաքական գաղափարախոսությամբ, հոգևոր կեղծավորությամբ, բարոյականի դիմակով ձգտում է մեզ խաբել և խաբում է:

2.Միայն Աստվածամոր բարեխոսությունը կարող է փրկել մեզ չարի իշխանությունից: Խաղաղությունը հնարավոր է հաստատել՝ սկսելով ապաշխարել, աղոթել Վարդարան, նվիրվել ամբողջությամբ Աստվածամորը և չկասկածել Ֆաթիմայի երևումների ճշմարտացիությանը:

Արքեպիսկոպոս Bernardito Auza-յի «խաղաղության ծրագիրը»՝ ՄԱԿ-ի համար

2017թ. մայիսի 13-ին՝ նույն օրը, երբ Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետն աղոթում էր Ֆաթիմայի Աստվածամոր ոտքերի առաջ և խաղաղություն աղերսում աշխարհի համար, հետաքրքիր զուգադիպությամբ, տեղի էր ունենում ՄԱԿ-ի համագումարը Նյու Յորքում, որն՛ առիթ եղավ ՄԱԿ-ում Հռոմի Սուրբ Աթոռի մշտական ներկայացուցիչ Արքեպիսկոպոս Bernardito Auza-յի համար՝ խոսելու Ֆաթիմայի երևումների և մեր օրերում խաղաղության հաստատման համար դրանց նշանակության մասին՝ ՄԱԿ-ին հասկանալի լեզվով: Այս ելույթը խիստ կարևոր է՝ այսօրվա մարդկության քննադատական տրամադրվածությանը ներկայացնելու դեռևս 105 տարի առաջ արձանագրված փաստեր առ այն, որ 1917թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին Ֆաթիմայի Cova di Iria հովտում տեղի ունեցած երևումները հեքիաթ, կամ հիվանդ երևակայության պտուղ չեն: 1917թ. հոկտեմբերի 13-ին այդ հովտում Աստվածամոր խոստացած հրաշքին կամ գերբնական երևույթին ներկա մոտ 70.000 բազմության հետ միասին ներկա լրագրողների և աթեիստների վկայության փաստագրմամբ Auza-ն փորձում էր համոզել ՄԱԿ-ի քաղաքական գործիչներին, իրավագետներին ու տնտեսագետներին, որ երևումները իրական փաստ են նաև անհավատների համար, ովքեր գրում են, որ այդ օրվա երևույթը չէր կարող լինել զանգվածային հիվանդ երևակայության արդյունք (mass hallucination), (այս մասին գրում է աթեիստ Richard Dawkins-ը՝ ”The God Delusion” գրքում):

Ցավալի է մերօրյա քրիստոնեության համար, որ արքեպիսկոպոսը երեխայի համար էլ հասկանալի լեզվով ՄԱԿ-ի «ուսյալ քրիստոնյաներին» ստիպված է բացատրել, թե ինչ է դարձի գալը, ապաշխարելը, հիշեցնում է Ֆրանցիսկոս Պապի խոսքերը:

Ի՞նչ է Ֆաթիմայի աղետալի տեսարաններից խուսափելու բանալին.
Ապաշխարել,
նվիրվել Աստվածամոր Անարատ Սրտին և վերափոխվել,
աղոթել, որովհետև աղոթքը խաղաղության հաստատման գործիք է.
«*Ֆաթիմայի ուղերձը պարունակում է մի դաս՝ աղոթքի օբյեկտիվ արժեքի մասին, այն որ աղոթքը կարող է ոչ միայն փոխել մարդու ներքին աշխարհը, այլև՝ արտաքին աշխարհը, ոչ միայն աղոթողին, այլև՝ դրսի աշխարհը*». ասաց Auza-ն և կոչ արեց բոլորին աղոթել և միասին լծվել խաղաղության կերտմանը:
Ա՛յս է խաղաղության նրա ծրագիրը, որ ներկայացրեց ՄԱԿ-ի ուշադրությանը:
Ուղերձի վերջում նա խոսեց Ֆաթիմայի հովիվ երեխաներին ընտրելու Մարիամի նախապատվության մասին, որի մասին գրեցինք նաև այս հոդվածի սկզբում.
«*Մարիամի ընտրության չափանիշը ցույց է տալիս, որ ամեն ոք ունի դերակատարություն, նույնիսկ՝ նրանք, ում այս աշխարհը համարում է աննշան, կամ անկարող կամ շատ երիտասարդ: Եթե հովիվ երեխաները կարող էին ընտրվել և արձագանքել ի սրտե, սա նշան է, որ բոլո՛ր կարող են*». ասաց Սուրբ Աթոռի ներկայացուցիչը:
Ուրեմն, առանց սպասելու մի հրաշքի կամ մեզ համար մասնավոր մի երևման, ամեն օր կառուցե՛նք խաղաղություն՝ սկսելով մեր տներից և երեխայի խոնարհությամբ, միամտությամբ աղոթենք Տիրամորն այս պարզ, բայց շատ զորեղ բառերով.
Ողջոյն քեզ Մարիամ, լի շնորհօք Տէր ընդ քեզ …

Տ. Հովսեփ Քհն. Գալստյան
2019թ.

Եթե գտնվում ենք Նրա թիկնոցի տակ, ապա մեզ ոչ մի վտանգ չի սպառնում

II դարում արդեն իսկ հայտնվում են հունարեն գրություններ հետևյալ խոսքերով. «Ողջոյն քեզ, Մարիամ, լի շնորհօք»: III դարում հայտնվում են աղոթքներ՝ ուղղված Աստվածածնին, օրինակ. «Քո ողորմության ներքո»:
Տիրամոր առանձնահատուկ սրբության ու դերի մասին գաղափարը անընդհատ զարգանում և հասունանում էր: Եկեղեցին հասկանում էր, որ Աստվածածինը չէր կարող առնչություն ունենալ մեղքի հետ, քանզի նա ընտրվել էր՝ Մարմնավորված Աստծո մաքուր տաճարը դառնալու համար:
Վերջապես, 1854թ. դեկտեմբերի 8-ին Պիոս IX պապը հռչակեց հավատքի ճշմարտությունը՝ առ այն, որ Սուրբ Աստվածածինը դեռ Սբ. Աննայի արգանդում զերծ է եղել սկզբնական մեղքից, որն ամբողջ մարդկությունը ժառանգել է Ադամից ու Եվայից:
Մարիամը նոր Եվան է, անմեղ աղավնի, ով մարդկությանը բերում է քավության և վերածննդի բարի լուրը՝ Քրիստոսով: Այն լուրը, որ մեղքը վերջին խոսքը չէ և որ Նրանով մեզանից յուրաքանչյուրը հաղթել է մեղքը:
Աստծո շնորհը ուժեղ է ամեն մեղքից: Մարիամը մեր Բարեխոսն ու Մայրն է: Շարունակելով Սբ. Պողոս առաքյալի միտքը, ով ասում էր. «*Որովհետև, ինչպես մեկ մարդու անհնազանդությամբ շատ մեղավորներ եղան, նույնպես և մեկի հնազանդությամբ շատ արդար պիտի լինեն: Բայց օրենքը մեջտեղ ընկավ, որպեսզի հանցանքները բազմանան, որովհետև, ուր որ մեղքը շատացավ, շնորհն առավել ևս շատացավ*» (Հռմ. 5, 19-20), ինչպես Եվայի միջոցով մենք դարձանք մեղքի և նախատինքի կրողներ, այնպես էլ Մարիամի միջոցով դարձանք շնորհի և ողորմության կրողներ՝ Աստծո ողորմությամբ:
Պողոսը խոսում է Ադամի և Քրիստոսի մասին, բայց դա արդար է ասել նաև Սուրբ Կույս Մարիամի վերաբերյալ: Ի՞նչ է դա նշանակում մեզ համար: Այն, որ նա, ով ընդունում, պատվում, ընդօրինակում և գնում է դեպի Տիրամայրը, ծածկվում է Նրա շնորհի թիկնոցով:
Նա ինքն է պայքարում մեզ համար, Նա մեր գոյության ու կոչման, մեր մարդկության գեղեցկության սրբապատկերն է, Նա նաև մեր հույսն է՝ լի շնորհներ ձեռք բերելու և Քրիստոսով փրկվելու համար:
Մարիամը մեր հոգևոր հաղթանակի գրավականն է՝ այն պայքարում, որ մենք մղում ենք՝ շնորհի և մեզանում Աստծո ներկայության համար:
Հունարեն բառը, որը դարձել է Մարիամի տիտղոսը. «*Կեխարիտոմենե*»՝ լի շնորհօք, ինչպես Նրան կոչում է Գաբրիել Հրեշտակապետը, մեզ համար ևս դարձել է կոչ, որ Մարիամի հետ միասին, ում խոնարհությունը Աստծո կամքի առջև,

վստահությունը Նրա խոսքին և հավատարմությունը կործանեցին սատանային, մենք էլ կհաղթենք չարին մեր մեջ և մեր շրջապատում:

Այդ պատճառով շատ կարևոր է սիրել Մարիամին, ապավինել Նրան կյանքի բոլոր դժվարին և անհույս իրավիճակներում, անվերապահորեն հավատալ, որ Նա կպաշտպանի ու կփրկի մեզ: Չտրվել մեղքին, ամեն անգամ վայր ընկնելուց հետո բարձրանալ և շարունակել ընթացքը: Մաքրվել Ապաշխարության խորհրդի միջոցով և ամրապնդվել Կյանքի Հացով՝ Սուրբ Հաղորդությամբ: Հետևել Մարիամին և սովորել Նրանից՝ ինչպես հավատալ և սիրել:

Եթե մենք գտնվում ենք Նրա թիկնոցի տակ, ապա մեզ ոչ մի վտանգ չի սպառնում, եթե մենք գնում ենք հավատքի ուղով՝ Նրա ձեռքը բռնած, ապա ճանապարհից չենք շեղվի, և Նա անպայման մեզ կտանի Իր Որդու Թագավորություն:

Հ. Պետրոս Ծ. Վրդ. Եսայան
Մոսկվայի հայ կաթողիկէների ժողովրդապետ
Ռուսերենից թարգմանեց՝ Նաիրա Բաղդասարյանը

Աստվածամոր բարեխոսությամբ քաղցկեղից հրաշքով բուժման մի արժանահավատ պատմություն

Սիրելի՛ ընթերցող, այստեղ հատվածաբար ներկայացնում եմ մեր ուսյալ վարդապետներից մեկի՝ Գերհ. Հ. Մեսրոպ Ծ. Վրդ. Թոփալյանի վկայությունը իր իսկ հրաշալի բուժման մասին: Հ. Մեսրոպը Սուրբ Կույսին մեծապես նվիրված, վարդարանասեր հոգևորական է, Տիրամոր մասին բազում գրքերի հեղինակ, գիտությունների դոկտոր:

… 1974թ. մայիսի 2-ին Վիեննայում գտնվելիս՝ առավոտյան ժամերին անակնկալ տեղափոխվեցի հիվանդանոց, ուր ենթարկվեցի կոյրաղիքի վիրահատության: Հիվանդանոցի անունն էր՝ «Hartmannspital», որ պատկանում է Քրիստոնեական Սիրո Ֆրանցիսկյան քույրերի միաբանությանը: Այդ տարվանից սկսած՝ գրեթե ամեն անգամ, երբ գնում եմ Վիեննա, մտնում եմ այդ հիվանդանոցը, անշուշտ անվճար …

Այս տարի ևս՝ 2012թ. հոկտեմբերի 17-ին, հիվանդանոցի պատասխանատու ք. Բիրգիթ մայրապետի հետ նախօրոք համաձայնեցնելուց հետո մտա հիվանդանոց՝ մեկ-երկու օրում կատարելու համար բժշկական քննություններս:

Ինձ արձանագրեց և հարցաքննեց երիտասարդ բժիշկ Փիթեր Քրեյթլերը: Մտնելուցս անմիջապես հետո տարվեցի ռենտգեն ճառագայթային նկարահանման …

Արդյունքն ինձ չհայտնեցին: Ինչպես հետո իմաց տվեցին, ուզում էին ստույգ իմանալ այն ինչ տեսել էին իմ աջ թոքի մեջ:

Ներքին բաժանմունքից ինձ այցելած գլխավոր բժիշկը՝ Մարկուս Ֆրանցը հրահանգեց հաջորդ օրը կատարել համակարգչային տոմոգրաֆիայի լուսանկարումը …

Հինգշաբթի՝ հոկտեմբերի 18-ի կեսօրից առաջ լուսանկարվեցի համակարգչային տոմոգրաֆիայով: Ոչ մի խոսք՝ ոչ մի արդյունքի մասին: Իմ կողմից էլ՝ ոչ մի հարցում և ոչ մի մտահոգություն՝ անսպասելիի առնչությամբ:

Անակնկալ հայտնաբերումը

Ուրբաթ՝ հոկտեմբերի 19-ին, կեսօրից առաջ, ինչպես ամեն օր, այդ օրն էլ ինձ այցելեց նույն գլխավոր բժիշկը՝ հայտնելու ախտորոշումը. «*Վարդապետ, լուսանկարումը հաստատեց ռենտգենի լուսանկարը: Ձեր աջ թոքի մեջ կա մի ուռուցք*, որի մասին ձեզ հետ կխոսի մեր թոքաբան բժշկուհին՝ Դ. Քիսսը: Ուրեմն, դեռ կմնաք հիվանդանոցում՝ մինչև մյուս շաբաթ»:

Նույն օրը՝ կեսօրից հետո, երբ սենյակումս աղոթում էի Վարդարանը՝ մի քիչ հարցաքննող մտքով, մի կողմից զարմացած, բայց միշտ խաղաղ սրտով, մյուս կողմից բժշկուհի Քիսը հանդիպեց ինձ՝ համառոտ հայտնելու իր որոշումը. «Վարդապետ, քննեցի նկարներն ու տեղեկագիրները: Ձեր աջ թոքի մեջ հյուսվածքի պես մի օտար մարմին կա, *քաղցկեղ է*, բայց դեռ չենք կարող իմանալ դրա տեսակը՝ վատ կամ լավ… Բայց քանի դեռ փոքր է, չեմ ուզում անել բրոնխոսկոպիայի քննությունը՝ այն խիստ պայմանով, որ այս գրելիք նամակիցս երեք ամիս հետո Լիբանանում գնաք բժշկական քննության և այդպես շարունակեք ամեն երեք ամիսը մեկ անգամ, մինչև որ ամեն ինչ հստականա և մի վերջնական որոշում կայացվի»:

Ապա, հաջորդած բավական երկար խոսակցության ընթացքում, երբ բժշկուհուս հայտնեցի թե ամիսներ շարունակ թքիս մեջ արյան փոքրիկ կաթիլներ կամ բաց վարդագույն նշույլներ եմ տեսնում, մեծ անակնկալի եկած և աչքերը խոշոր բացած՝ միանգամից հարեց. «Ի՞նչ եք ասում, վարդապետ, մինչև այսօր ինչու՞ չհայտնեցիք: Հիմա հարցը բոլորովին փոխվեց… Ձեր հարցը ես պետք է անպայման քննեմ բրոնխոսկոպիայի զննությամբ … »:

Մանրամասն բացատրություններով ինձ լուսաբանեց, թե ինչ էր անելու, նաև իմ ուշադրությանը հանձնեց հնարավոր վտանգավոր հետևանքները, ինչպես նաև մահացու վտանգի պարագան … Նույնիսկ խոսեցինք ապագայում կատարվելիք վիրահատության մասին …

Բժշկուհիս խնդրեց, որ ստորագրեմ բրոնխոսկոպիայի և էնդոսկոպիայի քննությունների կապակցությամբ պատրաստուած իրավական երկու փաստաթղթերը …

Ուրբաթից մինչև երեքշաբթի ժամանակահատվածը դարձավ այն շրջանը, երբ ինքս ինձ գտա մահվան դիմաց… Այո, քանի որ ինձանից պահանջվեց, ապա պետք է հայտնեմ իմ այս աննախադեպ փորձառությունս. «Տեսա մահը: Եվ մահը անուշ է: Մահը քաղցր է»:

Նոր ու անբացատրելի իմ փորձառությանս շոշափելի փաստն այն էր, որ ես բոլորովին ժպտուն և խաղաղ էի ամբողջ ժամանակ, այնքան, որ բժշկուհուս և հիվանդապահուհիներիս հաճախ ասում էի. «Մի՛ մտահոգվեք, ես վախ չունեմ ոչ քաղցկեղից, ոչ մահից»: Սովորականից ավելի հանգիստ էի քնում ամեն օր: Իմ արտաքին ու ներքին ուժս ամենօրյա Սուրբ Հաղորդությունս էր: Վստահությունս և սփոփանքս էր Մարիամը՝ իմ Սիրամայրը: Քաջալերանքս էին՝ ամենօրյա երկու-երեք վարդարանները: Գլխավոր զբաղմունքս էր՝ Աստվածաշնչի մասին ընթերցումը և սաղմոսների աղոթքս: Սրտիս մեջ անդադրում սլացական աղոթքներ էին և մտքիս մեջ՝ մշտական խոհեր. «Աստվա՜ծ իմ, Քո կամքը թող օրհնեալ լինի»:

Կամ՝ «Մարիա՜մ, Մայր իմ, Սիրամայրս, օգնի՜ր ինձ, որ կատարեմ Որդուդ կամքը, որ նաև իմ Եղբայրս է»:

Կամ՝ «Մարիա՜մ, Մայր իմ, Սիրամայրս, կյանքս նվիրում եմ Եկեղեցուս համար ….»

Կամ՝ «Ո՜վ Տեր, Աստվածային Սրտիդ իբրև հատուցում, պատրաստ եմ զոհաբերելու կյանքս՝ հոգիների փրկության համար»:

Կամ՝ «Հիսու՜ս, Փրկիչ իմ, ընդունի՜ր կյանքիս զոհը՝ իբրև քավություն՝ մեղքերիս համար»:

Սիրամորս երկրորդ միջամտությունը

Շաբաթ՝ հոկտեմբերի 20-ին, Հ. Վահան Վրդ. Հովակիմյանն ինձ բերեց մի գիրք, որն ինձ նվեր էր ուղարկել բրազիլացի պրն. Շաֆերը… Գերմաներեն 127 էջանոց գրքի վերնագիրն էր՝ «Ֆաթիմա. պատգամը ողբերգությա՞ն, թե՞ հույսի»: Մինչև այսօր թարգմանված է քսան լեզուներով … հեղինակն էլ բրազիլացի Անտոնիո Բորելլի Մախատոն է: Գիրքը գրավեց ինձ. մեկ շնչով կարդացի-վերաջցրի այն ճաշից հետո՝ մինչև գիշերվա ժամը 11:00: Հաջորդ մեկուկես օրը համակված էի Ֆաթիմայի պատգամով:

Ներքին խլրտմանս հետևանքը

Երկուշաբթի՝ հոկտեմբերի 22-ին, նախաճաշից հետո, ներքին խլրտմանս հաջորդեց այս իմ սրտաբուխ դիմումը. «Սիրամա՜յր, ես չեմ վախենում ոչ քաղցկեղից և ոչ մահից, այլ՝ միայն թող կատարվի՜ Աստծո կամքը:

Սիրամա՜յր Մարիամ, Դու իմ Մայրն ես, եթե այս փորձանքից ազատես ինձ, քեզ խոստանում եմ հայերեն թարգմանել Անտոնիո Բորելլի Մախատոյի Ֆաթիմայի գիրքը և տպագրել …

Քեզ միշտ սիրում եմ և քեզ համար դեռ շատ գրելիքներ ունեմ, սակայն միշտ կրկնում եմ, թե հիմա էլ թող կատարվի իմ Տիրոջ կամքը, որի Մայրն ես՝ որդեսեր և ամենահզոր: Ես միշտ պատրաստ և սիրահոժար եմ ամեն ինչի, որ Դու ուզում ես, ո՜վ Մարիամ՝ Սիրամայր իմ սիրո. ամեն»

Վարդապե՛տ, փորձեցի հասնել ուռուցքին, բայց չկարողացա

Երեքշաբթի՝ հոկտեմբերի 23-ին, առավոտյան ժամը 10-ի մոտ, անկողնով տարվեցի քննության սրահը՝ ենթարկվելու բրոնխոսկոպիայի զննության: Հիշում եմ, որ պառկած էի, ձեռքերս կապված էին, երբ իր կանաչ հագուստով, գլխարկով և ձեռնոցներով բժշկուհիս եկավ: Ժպտերես ասացի. «Տիկի՛ն, կուզեի Ձեզ օրհնել, բայց ձեռքերս կապված են արդեն»: Բժշկուհիս ժպտաց:

Արդեն մեկ ժամ անցել էր, երբ ինձ առաջնորդեցին սենյակս: Մի քիչ հանգստանալուց հետո կարողացա քայլել՝ իմ երկրորդ վարդարանն աղոթելով: Ընդհատեցի աղոթքս, երբ եկավ ժպտերես և համեստ բժշկուհիս՝ խնդրելով, որ մի քիչ խոսենք … Միանգամից նշմարեցի, որ շատ ուրախ չէր: Մանրամասներ տվեց կատարված զննության վերաբերյալ: Ամեն բան շատ հաջող էր անցել: Դրա համար ուրախ էր: Թոքիս միջից հանված մասերն արդեն ուղարկվել էին տարրալուծարան՝ քննության, որի արդյունքները պետք է իմանայի նոյեմբերի 6-ին: Բայց ինչպես հստակ զգացի՝ բժշկուհիս ուրախ կամ հանգիստ չէր ամբողջովին: Պատճառն ասաց. «Վարդապե՛տ, ջանացի հասնել ուռուցքին, բայց չկարողացա, հյուսկենը մնաց իր տեղում…»: Բժշկուհիս, կարծես անճարակ էր դարձել: Մի պահ լուռ մնացինք: Ի վերջո

իրար մխիթարելով՝ բաժանվեցինք: Նաև զգացի, որ շնորհալի բժշկուհիս չէր ուզում հանձնվել և ուզում էր մի բան անել… Ի՞նչ…

Սիրամորս երրորդ միջամտությունը

Շատ չանցած՝ պատասխանը ստացա, երբ հիվանդապահն ինձ անակնկալ կերպով առաջնորդեց ռենտգենի գետնահարկ սենյակը: Մեր խոսակցության ընթացքում երբեք չխոսվեց նոր լուսանկարի մասին: Ես հարցրերի պատճառը: Հիվանդապահը պատասխանեց. «Վարդապե՛տ, չգիտեմ: Ձեր բժշկուհին այսպես հրահանգեց…»: Հետևաբար, դարձյալ լուսանկարեցին թոքս:

Քանի որ նախաճաշ չէի արել, սոված էի, ուստի և բերված ճաշը մեծ ախորժակով կերա… Ապա, շատ երկար ու հանգիստ քնեցի:

«Վարդապետ, դուք շատ լավ եւ հզոր մի պաշտպան ունեք…»

Ընթրիքից հետո, մինչ աղոթում էի երրորդ վարդարանս, դուռը թակեցին. բժշկուհիս էր, անակնկալի եկա, չէր ասել, թե գալու էր…

Միանգամից տեսա դիմացինիս շատ ուրախ կերպարանքը. աչքերը շողում էին բերկրանքից, ամբողջ դեմքը լուսաշող էր. «Վարդապետ, կարո՞ղ եմ խոսել Ձեզ հետ»: «Անշուշտ, Դուք իմ բժշկուհին եք»:

Դեմ առ դեմ նստեցինք խաչելության հովանու տակ, վարդարանը բռնել էի աջ ձեռքումս: Առավոտյան խոսքերը համադրելով՝ նորից շեշտեց, թե «Վարդապե՛տ, փորձեցի հասնել ուռուցքին, բայց չկարողացա: Ուստի, հյուսկենը մնաց տեղը…»:

Ապա, երկար մի շունչ քաշելուց հետո ցնծագին ձայնով ասաց. «Վարդապե՛տ, ռենտգենի լուսանկարումը ոչ մի բան ցույց չտվեց… Այսինքն, Ձեր թոքի մեջ եղած ուռուցքը ամբողջովին անհետացած է… Վարդապե՛տ, չգիտեմ՝ ինչ ասեմ, նկարում չի երևում ուռուցքը…»

Բարի բժշկուհիս լռեց, շփոթության մատնվեց: Ստիպված եղա օգնության հասնել: Աջ բազուկը կամացուկ բախելով՝ ժպտերես շեշտով ասացի. «Աստվածամա՛յր կա, Տիկի՛ն»:

Բժշկուհիս ուսը վեր բարձրացնելով՝ զարմացած և արագ շեշտով հարցրեց. «Ի՞նչ կա, Վարդապետ…»:

«Աստվածամա՛յր կա, Տիկի՛ն բժշկուհի, Աստվածամայրը այստեղ է»:

Այդ ժամանակ կարծես ինքնաբերաբար, բայց ահաստատ ու բարձր ձայնով պատասխանեց. «Վարդապե՛տ, Դուք շատ լավ ու հզոր մի պաշտպան ունեք…»:

«Այո՛, Տիկին բժշկուհի», ասացի:

«Վարդապե՛տ, Դուք այևս քաղցկեղ չունեք»

Երկուսս էլ ուրախ էինք, բայց կարծես, դիմացինս ավելի ցնծուն էր… Շարունակեցինք մեր խոսակցությունը, որի ավարտին բժշկուհիս վերահաստատեց այս հստակ նախադասությամբ. «Վարդապե՛տ, Դուք այլևս քաղցկեղ չունեք»: Սակայն ստուգման և ապահովության համար Ձեզ վաղը խետք է ուղարկեմ համակարգչային տոմոգրաֆիայի լուսանկարման, որից հետո Դուք ազատ եք և կարող եք գնալ վանք: Արդյունքի մասին կզանգահարվենք հինգշաբթի՝ ժամը 12-ի մոտ»:

Սրտատրոփ շնորհակալությանս սաղմոսներն ու վարդարանն աղոթելուց հետո քնեցի, որից առաջ սակայն երախտապարտ ժպիտը դեմքիս՝ մրմնջացի. «Սքանչելիքների Տերը նաև մեղավորիս համար է հրաշագործում՝ ինքն իրեն «Ֆաթիմայի Թագուհի» կոչած Տելսամոր միջնորդությամբ… Ամեն, ալելուիա…»:

Հրաշքի բժշկագիտական հաստատումը

Չորեքշաբթի՝ հոկտեմբերի 24-ին, ժամը 10-ին կատարված տոմոգրաֆիայի լուսանկարումը հաստատեց նախորդ օրվա ռենգտենի ճառաքայթային նկարը: Մեջբերում եմ օրատետրիցս. «Տոմոգրաֆիայի քննությունը կատարեցի: Արդյունքը՝ ոչինչ չկա: Ուռուցքը չկա, անհետացել է … Արձակվեցի հիվանդանոցից: Ոչ մի դեղ չստացա թոքերիս համար… Ոչինչ չի մնացել… Փա՜ռք Աստծո: Սե՜ր Աստվածամոր: Շնո՜րհ, իմ սիրագեղ Մա՜յրս քաղցրագութ»:

Երեքշաբթի՝ նոյեմբերի 6-ին, ժամը 11-ին, բժշկուհուս՝ տկն. Քիսսի հետ հարկ չեղավ հանդիպելու, ինչպես ինքն ասաց, այլ միայն հեռախոսով իմաց տվեց, թե բժշկական բոլոր արդյունքները՝ գրավոր ու լուսանկարային, մեկ անգամ էլ քննարկել և ամեն բան մաքուր է գտել, բայց, հատկապես, որ թոքիս մեջ եղած ուռուցքը անհետացել է… Նույնպես թոքերիցս հանված և տարրալուծարան ուղարկված նյութերի վերլուծական քննության արդյունքը լիովին դրական է և քաղցկեղի մասին ոչինչ չկա…

Կենսափորձառական եզրահանգումս

Հիվանդանոցի ութ օրերի իմ կենսափորձառությունս ունեցավ իր ապրումներն ու հանգրվանները, որոնք անհնար է նկարագրել մանրամասնորեն: Դրանցից հանգած երգակացությունս բովանդակում է հետևյալ տասներկու կետերը:

1.Տիրամոր միջնորդությամբ Աստված հրաշագործում է նաև թե՛ մեղավորիս և թե՛ մեղավորների համար: Սրանից հետո իմ ամեն մի օրս պատկանում է հրաշագործ Սիրամորս:
2.Բոլորովին անարժան եմ՝ ինձ Երկնքից տրված այս բուժարար շնորհին:
3.Մահը անուշ է: Մահը քաղցր է:
4.Հոգևորականներս հաճախ պետք է քարոզենք մահվան մասին:
5.Հոգևորականներս սովորեցնելու ենք մեզ հանձնված հոգիներին, թե պետք է միշտ պատրաստ լինեն մահվան՝ լինելով շնորհքի վիճակի մեջ և Աստծո հետ հաշտված՝ սուրբ խոստովանությամբ…
6.Պետք է հավատանք և վստահենք Մարիամ Տիրամոր ամենահզոր և խնդրակատար միջնորդությանը:
7.Պետք է գործադրենք և գործադրել տանք Փաթիմայի տեսլամոր՝ Սբ. Վարդարանի Թագուհու պատվերը, թե ամեն օր պետք է աղոթել Վարդարան:
8.Ես անձնապես երախտապարտ եմ ամեն րոպե և մինչև աստենական կյանքիս վերջին օրը, այնպես էլ՝ անդենական կյանքիս մեջ:
9.Իմ երախտապարտության առաջնահերթ ու մշտատև ապացույցն այն է, որ քահանայագործությունս, առաքելությունս, նույնիսկ ամեն մի խոհս, խոսքս, արարքս սրանից հետո համապատասխանելու է ինձ պարգևված հրաշալի բուժմանս…
10.Երախտագիտությանս տևական արտահայտություններից մեկն է՝ այն հաստատ առաջադրանքս, որ կյանքիս մնացյալ ժամանակը պետք է հատկացնեմ և տրամադրեմ միայն իմ հրաշագործ Սիրամորը՝ գրելով և ստեղծագործելով Նրա մասին…
11.Առաջին հերթին, սակայն, պիտի իրագործեմ տուածս խոստումը և պիտի հայացնեմ Ֆաթիմայի Կուսամոր մասին վերոհիշյալ շատ հոգեշահեկան գիրքը: (*Հ. Մեսրոպ Թոփալյանն իր այդ խոստումը կատարեց և Ա. Մ. Բորելլիի այդ գիրքը լույս ընծայեց 2015թ., և նույն այդ գրքի վերջում է զետեղված իր հրաշալի բուժման մասին այս պատմությունը*)
12.Շնորհակալությունս եմ հայտնում Քրիստոնեական Սիրո Ֆրանցիսկյան քույրերի միաբանությանը և, հատկապես, ք. Բիրգիթ Ֆրանց Դորֆմեյր մայրապետին, ինչպես նաև Hartmannspital հիվանդանոցի … ժպտուն և հարգալիր անձնակազմին:

Հետգրության

Հոգևոր հայրե՛ր և եղբայրնե՛ր, թեպետև հետինիս և անարժանիս տրված հրաշալի առողջացումը կարիք չունի մարդկային վավերացման, բայց և այնպես հետաքրքրվողները կարող են աչքի անցկացնել և ստուգել հրաշագործ Սիրամորս միջնորդությամբ կատարված բուժմանս կապակցությամբ բոլոր բժշկական ապացույցները՝ լինեն դրանք գրավոր տեղեկագրեր, թե նամակներ կամ լուսանկարների պատճեներ…
Փա՜ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Աղբյուր՝ Անտոնիո Պորելլի Մախատո, «Ֆաթիմա՝ Պատգամ ողբերգութեա՞, թէ յոյսին…»,
թարգմանիչ՝ Մեսրոպ Հայունի, Այնճար, 2015թ.,
արևելահայերենի վերածեց՝ Տ. Հովսեփ Քհն. Գալստյան

Ճշմարիտ նվիրում՝ Ամենասուրբ Կույս Մարիամին

("Traite' de la vraie de'votion a la sainte Vierge", 1843)

Սբ. Լուի-Մարի Գրինյոն դը Մոնֆոր (St. Lois-Marie Grignon de Monfort)

Հատված գրքից

Ինչու՞ է անհրաժեշտ նվիրվել Ամենասուրբ Կույս Մարիամին

1.Ամենասուրբ Կույս Մարիամի միջոցով Հիսուս Քրիստոս եկավ աշխարհ, Մարիամի միջոցով Նա կթագավորի աշխարհում:
2.Մարիամը քողարկված էր Իր կյանքի ընթացքում, այդ պատճառով Սուրբ Հոգին և Եկեղեցին Նրան անվանում են Alma Mater՝ Մայր Գաղտնի և Խորհրդավոր: Նրա խոնարհությունն այնքա՜ն խորն էր, Նա անդադար ձգտում էր միայն մեկ բանի՝ փակվել Ինքն Իր մեջ և ոչ մեկին հայտնի չլինել, այլ՝ միայն Տիրոջը:
3.Նա աղոթում էր Տիրոջը՝ անհայտ մնալու, աղքատ և խոնարհ լինելու համար, և Աստված ուրախությամբ լսեց Նրա աղոթքները՝ Առեղծված դարձնելով Նրա Հղացումը, ծնունդը, երկրային ճանապարհը, հարությունն ու ննջումը: Ծնողներն անգամ չգիտեին ամբողջ ճշմարտությունը Նրա մասին, և նույնիսկ հրեշտակներն էին հաճախակի հարցնում. «Ո՞վ է նա»: Չէ՞ որ Աստված Նրան թաքցրեց նրանցից կամ, հայտնելով ճշմարտության մի մասը, անհամեմատ ավելի շատը ծածկեց Առեղծվածի քողով:
4. Հայր Աստված բարիք համարեց, որ Մարիամը հրաշքներ չգործեր իր երկրային կյանքի ընթացքում, կամ առնվազն, որ դրանց մասին հայտնի չլիներ, թեև տվեց Նրան մեծ զորություն: Որդին Աստված որոշեց, որ Մարիամը գրեթե չի խոսելու, թեև Նրա խոսքն ինքնին իմաստություն է: Սուրբ Հոգին Աստված, թեև Մարիամն իր հավատարիմ ընտրյալն



էր, այնպես արեց, որ առաքյալներն ու ավետարանիչները շատ քիչ են հիշատակում Նրա մասին, և՝ միայն այն ժամանակ, երբ դա անհրաժեշտ է Հիսուս Քրիստոսին ճանաչելու համար՝ Նրա Մոր միջոցով:

5. Մարիամն Աստծո չքնաղագույն ստեղծագործությունն է, միայն Աստված գիտի Նրա մասին ամեն ինչ, և միայն Աստծուն է Նա պատկանում ամբողջովին: Մարիամը Աստծո Որդու սիրեցյալ Մայրն է, Ով Իր Սրտում սիրելով և հարգելով նրան առավել ուժեղ, քան բոլոր հրեշտակներն ու մարդիկ, կյանքի ընթացքում քողարկում էր նրան և հայտնի չէր անում ուրիշների մեջ՝ կոչելով Նրան «Ո՛վ կին», կարծես, Իր համար օտար մեկին, որպեսզի Մարիամի զոհաբերումը առավել մեծ լինի: Մարիամը առեղծվածային Խորհրդի աղբյուր է, Սուրբ Հոգու հավատարիմ Ընտրյալը, և միայն Սուրբ Հոգին կարող է մտնել Նրա մոտ: Մարիամը Սուրբ Երրորդության Տաճարն է և հանգստավայրը, որտեղ Աստված Ինքն Իրեն սքանչելի կերպով հայտնում է առավել լրիվությամբ, քան՝ տիեզերքի ցանկացած այլ անկյունում, քան, նույնիսկ, քերովբեների և սերովբեների մոտ: Ինչքան էլ մարդը մաքուր լինի, միայն մեծ ողորմությամբ է թույլ տրված մարդուն մտնել այդ Տաճարը:

6. Սրբերի հետ միասին ես կրկնում եմ՝ Մարիամը Նոր Ադամի (*այսինքն՝ Հիսուս Քրիստոսի-խմբ.*) երկրային դրախտն է, որտեղ Նա մարմնացավ Սուրբ Հոգու միջոցով, որպեսզի կատարի հրաշքներ՝ անընմբռնելի կերպով: Մարիամն Աստծո մի մեծ աշխարհ է, գանձերի և գեղեցկության աշխարհ, որը հնարավոր չէ բառերով արտահայտել: Այսչա՜փ մեծ է Բարձրյալի առատաձեռնությունը, որ քողարկել է այստեղ, կարծես, իր սեփական Սրտի տակ, Իր Միածին Որդուն, իսկ Նրանում՝ այն ամենն, ինչ անսովոր է և ամենաթանկը: Օ՜, որքան Մեծություն և Գաղտնիություն է Ամենակալ Աստված մարմնավորել իր այս հրաշագեղ արարածի մեջ, ինչպիսին Մարիամն է՝ Մաքրամաքուր, ինչպես Ինքն է խոստովանում դա. «*Մեծամեծ գործեր արեց ինձ համար Հզորը, և Սուրբ է Նրա Անունը*»: Այս ընծաների մասին աշխարհը չգիտի, որովհետև աշխարհն արժանի և ընդունակ չէ այդպիսի գիտության:

7. Աստծո բնակավայրի՝ Մարիամի մասին, սրբերը պատմում են զարմանալի բաներ, և երբեք, իրենց իսկ խոստովանությամբ, նրանք չեն եղել այնքան պերճախոս և երջանիկ, քան՝ այն ժամանակ, երբ խոսել են Մարիամի մասին: Հետո նրանք բացականչում են, որ իրենք էլ չեն իմացել Տիրամոր առաքինությունների բարձունքի մասին, որոնք Նրան բարձրացրել են մինչև Աստծո գահը, որ Աստծո Ողորմությունը, որ ականջալուր է եղել Նրա աղաչանքներին, անչափալիորեն վիթխարի է և ամբողջությամբ ներառում է ամբողջ աշխարհը, որ Աստծո ամենակարողության վսեմությունն անընմբռնելի է, որ, ի վերջո, Մարիամի խոնարհությունը, առաքինությունը և բարությունը նման են անդնդի: Ո՜վ Բարձրություն Անճառելի: Ո՜վ Լայնություն Անծայրածիր: Ո՜վ Տարածություն Անսահման: Ո՜վ անդունդ Ամենախոր:

8. Բոլոր օրերում, աշխարհի մեկ ծայրից մինչև մյուսը, երկնքի բարձունքներում և անդունդների խորքում, Արարչագործությունը գովություն է երգում Զքնաղ Մարիամին: Հրեշտակների ինը դասերը, մարդիկ՝ անկախ սեռից, տարիքից, դիրքից, կրոնից, բարիներն ու չարերը, նույնիսկ դևերը ստիպված են Նրան անվանել Երանելի, կամովին թե առանց կամենալու, որովհետև դա՛ է Ճշմարտությունը: Երկնքում բոլոր հրեշտակներն անդադար բացականչում են, ինչպես մեզ ասում է Սբ. Բոնավենտուրը. «Սու՜րբ, Սու՜րբ, Սու՜րբ Կույս Մարիամ, Մա՜յր Աստծո...»: Յուրաքանչյուր օր, ամեն ժամ, Նրա առաջ գետնամած աղոթքով՝ նրանք Ամենաանարատ Մորն են բերում հրեշտակային ողջույնի խոսքերը. «Ողջո՜ւն քեզ, Մարիա՜մ...»՝ աղաչելով Նրան՝ ամենաչնչին մի շնորհի համար: Ինչպես ասել է Սբ. Օգոստինոսը, ինքը՝ Միքայել հրեշտակապետը՝ երկնային ամբողջ դասի իշխանը, որ նախանձախնդրությամբ պանծացնում է Սուրբ Կույսին, հրավիրում է բոլորին փառաբանել ամենամաքուր Կույսին և մեծ պատիվ է համարում իր Տիրուհու առաջին իսկ խոսքով օգնել նրա հավատարիմ ծառաներից փոքրագույնին:

9. Ամբողջ երկիրը լի է Տիրամոր փառքով, հատկապես, քրիստոնեական երկրները, որտեղ Նրան համարում են պետությունների, շրջանների, թեմերի և քաղաքների հովանավոր և պաշտպան: Մարիամին են նվիրված բազում տաճարներ: Չկա ոչ մի եկեղեցի, որտեղ չլինի Նրան նվիրված մի խորան, աշխարհում չկա մի անկյուն, որտեղ չլինի Նրա հրաշագործ մի սրբապատկեր, որ բուժում է հիվանդություններ, վտարում է չարը և բարիքներ պարգևում: Որքա՜ն եղբայրություններ և միաբանություններ են նվիրված Նրան: Որքա՜ն միաբանություններ և հաստատություններ է Նա հովանավորում: Որքա՜ն վանականներ և մանիձնուհիներ՝ տարբեր դավանական ուղղություններից, վկայում են Նրա կատարած հրաշքների մասին և հռչակում Նրա գթասրտությունը: Չկա աշխարհում մի փոքրիկ մանուկ, որի շուրթներին չեն հնչում հրեշտակային ողջույնի բառերը, չկա մի մեղավոր, որ, հոգով չարացած լինելով, իր մեջ չփայփայի մեկ հատիկ հույս՝ Նրա ողորմածությունը գտնելու: Չկա նույնիսկ մի դև՝ անդրաշխարհում, որ չհարգի Կույս Մարիամին և չվախենա նրանից:

Св. Людовик-Мария Гриньон де Монфор, “Трактат об истинном почитании Пресвятой Девы Марии”, 2008
Ռուսերենից թարգմանեց՝ Տ. Հովսեփ Քհն. Գալստյան

Շարունակությունը՝ թերթի հաջորդ համարներում...

Թերթի հովանավորներ՝

Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի հայ կաթողիկէների Առաջնորդարան

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն

Թերթի կազմող և խմբագիր՝
Տ. Հովսեփ Քհն. Գալստյան՝
Հոգեւոր հովիվ՝ Աշոցքի հայ կաթողիկէների
Հեռ.՝ +37455698957
Էլ. Հասցե՝ levongalstyanarmcatholic@gmail.com

*Բաժանվում է **անվճար***

Գյումրի, Հայ Կաթողիկէ Առաջնորդարան, 2022թ.